№ 48 ՇԱԲԱԹ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1875 № 48

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ:
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
«Въ редак. газеты Пчела Арменіи»

ՈՒԹԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1876
ՄԵՂՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԼՐԱԳԻՐԸ
կհրատարակվի շաբաթը
մի անգամ
ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ, և ԴԻՐՔՈՎ
ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.

Թիֆլիսում ստորագրվել կարելի է.

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (պարոն Ս. Վարդանեանի տանը, հեռագրի կայարանին կից, Վանքի Թաղում).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտանվում է պ. Հ. Էնֆիաճեանցի եւ Ընկ. տպարանում (Գոլովինսկի պրոսպեկտի վերայ, բժշկապետ Մ. Ռօտինեանցի տանը):

պ. Համբ. Էնֆիաճեանցի **ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ** (Դվորցովոյի փողոցի վերայ, Գեներալ Արծրունու պալէրէում № 3) եւ

պ. Վարդանեանի եւ Ընկ. **ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ** (Միխայելովսկի կամուրջի վերայ):

Օտարաքաղաքացիք Թող բարեհաճին դիմելու ուղղակի խմբագրութեանս հետեւեալ հասցէով՝

Въ редакцію Армянской газеты „ПЧЕЛА АРМЕНІИ" въ Тифлисъ.

ԹԻՖԼԻՍ 13-ԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

Վաղը քաղաքագլխի ընտրութիւն է. Թիֆլիսը կրկին ճգնաժամի մէջ է: Նա պէտք է քաղաքագլուխ ընտրէ. բայց չգիտէ թէ ում ընտրէ: Ամենքի բերանից նոյնն է լսվում, թէ մարդ չկայ: Այո՞ պէտք է փիլիսոփայի լապտերով Թիֆլիսում մարդ որոնել: Այսպիսի հանգամանքները միայն կարող են մնավառ հասարակութիւնները համոզել, որ իրանք ողորմելի դրութեան մէջ են: Թիֆլիս—և մի քաղաքագլուխ չէ ճարում իւր մէջ, ցաւալի է այս. բայց իրողութիւն է: Ահա ինչ նշանակէ իսկական հասարակական կեանքի պակասութիւն, որ չէ առաջացրել անձինք, հանդէս դուրս չէ բերել զօրեղ անհատներ իրանց բոլոր գոյներով, իրանց բնաւորութեամբ և գաղափարներով: Յուսահատվի՞նք ուրեմն: Ո՛չ. համաքաղաքացիք. այլ պէտք է աշխատենք մեր հասարակական կեանքը յեղափոխելով ստեղծել ապագայի համար անձինք:

Ներկայն խրատ է ապագայի համար, լաւ ապաւորենք մեր մէջ ներկայ դրութիւնն, որ զգոյշ լինինք և հոգանք ապագայի համար. ապա թէ ոչ, սոյն ճգնաժամը ներկայ ընթացքով աւելի պարհուբելի կերպարանքով կերևի մեզ միշտ ապագայում:

Իսկ ինչ անենք ներկայի համար: Իրաւ է, ներկայ վարչութիւնն և իրաւասուների ժողովը չարդարացրին լսվին ժողովրդի յոյսերը չպահպանելով իւրեանց նիստերում խոհեմ դիրք ու չարդիւնաւորելով իւրեանց գործունէութիւնն, որքան սպասելի էր. բայց չյուսահատվինք. համոզված լինելով որ կան մեր մէջ անձինք, թէև ոչ կատարելապէս յարմար ներկայ քաղաքագլխի պաշտօնի պահանջներին, բայց գոնէ այնպիսիք, որոնք իրանց կրթութեամբ կրում են իրանց մէջ նորա համար կարեւոր որակութիւնք, որոնք կարօտ են միայն փորձերով զարգացման, և կարող կլինին վարել այդ պաշտօնը, եթէ իրաւասուների ժողովն և վարչութեան անդամներն բոլոր ուժով կաշխատեն աջակցել իւր քաղաքագլխին և չեն ենթարկվել կուսակցական ոգուն և շահասիրական ձգտումների: Այս անձինք պէտք է միայն որոնել առանց աչքի առաջ ունենալու ոչ աստիճանի բարձրութիւն, ոչ ծագման ազնուութիւն և ոչ էլ նիւթական հարստութիւն, այլ լաւ կրթութիւն, զարգացումն և բնաւորութեան ազնուութիւն: Ներկայ կեանքն ինքնակառավարութիւն է. ուստի և ինքնուրոյն բնաւորութիւն և հեղինակութիւն է պահանջում, որ ոչ բազմամեայ ծառայութիւնն է տալիս, ոչ ծագման ազնուութիւնն և ոչ էլ ամենայն ոչ հրապարակական այլ ծածուկ միջոցներով ձեռք բերած նիւթական հարստութիւնն, այլ ժամանակայարմար կրթութիւնն, մտաւոր զարգացումն և ձեւակերպված և ամուր համոզմունքներն ու հայեցուածքները: Ուստի և աւելորդ է մտնելով կամ բարձրաստիճան, կամ ազնուական և կամ հարուստ անձինք համարելը: Պէտք է թողնել այդ նախապաշարմունքը, որ առկական կեանքի հետեւանք է: Որոնեցէք մարդ ճշմարտասէր, անշահասէր, գործունեայ, բարեկիրթ և հասարակական գործերի համար սրտացաւ անձն, որ դասակարգին էլ նա պատկանելիս լինէր: Ի վերջոյ մտածենք, որ քաղաքագլուխ ոչ թէ քաղաքին իշխան է ընտրվում, այլ նրան գործունեայ, հաւատարիմ և տնտես ծառայ:

ԱԶԳԱՅԻՆ

Վայ այն դրականութեան, որ կանանց համեստութիւնն էլ չէ խնայում:

Մարդս ապշում է, թէ ինչպէս երբեմն մեր հրապարակական թերթերը գործածվում են իշար: Ամօթ, պատկառանք, սրբութիւն, պատուի զգացում՝ կարծես մեր սերնդի մէջ վերացել է, կամ եթէ մնացել է՝ ոտնակոխ է լինում խպառ: Ցաւալին այն է, որ թեպէտ և ընթերցողների վերայ այդ ուղղութիւնը շատ անգամ անախորժ տպաւորութիւն է գործում, բայց մեզանում կարծես անվայել է համարվում՝ այդ հրապարակաւ և ի լուր ամենեցուն յայտնել: Որով հետզհետէ այն ազգերի շարքն ենք մտել, որոնք իւրեանց պարբերական թերթերի մէջ միայն ցածր և ստորին բաներ են որոնում կարդալու, ամենևին ձգտողութիւն ցոյց չտալով, թէ ուրիշ աւելի բարձր զուարճութիւն ցանկանում են գտնել: Եւ յիրաւի կարծես մեր հրապարակական թերթերը նորա համար են, որ ամբաստանութիւնը ամբաստանութեան վրայ, զրպարտութիւնը զրպարտութեան վրայ . . . . խայտառակութիւն և անպատուութիւն ժայթքեն, մեր հեղինակների յատկանիշ է դարձել մեծ մասամբ անքաղաքավարի, վայրենի, կոպիտ լինելը: Եւ որովհետև այս ամենայն կատարւում է անրօղք և անպատիժ՝ մեր վայրախօս հերոսներն աւելի քաջալերվում և խրախուսւում են իրանց սխրագործութեանց մէջ: Մեր հրապարակախօսութիւնն այնքան յառաջադիմութիւն է ստացել, որ կանանց պարկեշտ զգացմունքներն անգամ չէ խնայում:

Ընթերցողները դուցէ գուշակեցին, թէ ես պ. Իգմիրեանցի գրութիւնն եմ ակնարկում, որ նորերումս առանձին թերթով հրատարակուեցաւ և «Մշակի» ստորագրողներին ուղարկուեցաւ, ուր ի թիւս այլոց հանգուցեալ Էֆէնդեանի կնօջ անունը յիշւում է, բայց ի հարկէ յիշւում է ոչ առանձին մեղմութեամբ: Պ. Իգմիրեանցը դորանից առաջ էլ, երբ Պետրոս Սիմէօնեանցին պատասխանում էր, անզգուշութեամբ մի քանի խօսքերով սրբապղծեց հանգուցեալ Էֆէնդեանի յիշատակը: Սիրտը խոցուած տիկին Էֆէնդեանը հանդէս դուրս եկաւ իւր ամուսնոյ բարի յիշատակը վերականգնելու համար: Այս շատ բնական էր, և մտածող մարդիկ անտարակոյս համակրելով յարգելի տիկնոջ զգացմանց, պէտք է կարծէին, թէ պ. Իգմիրեանցը կը խոստովանէ իւր անզգուշութիւնն և նախ և յառաջ ներողութիւն կը խնդրէ նորանից: Չէ. պ. Իգմիրեանցի գլուխն քարը չպէտք է կանգնի... նա պէտք է անդունդը գնայ: Սա պատասխանեց, բայց այնպէս, որ իր մէկ ասածը տասն անգամ բազմապատկեց: „Դու Տիկին, ինչպէս համարձակուեցար վիրաւորվել." այս է նորա պատասխանի աղը, որ համեմուած է շատ անհամեղ ակնարկութիւններով. այսինքն Տիկինն ասում է, դու ինձ վիրաւորեցիր, իսկ պ. Իգմիրեանցը պատասխանում է, քու քիթդ ծուռ է:

Այժ դարձեալ կրկնում եմ. մեր հրապարակական թերթերն անվայել դիրք են բռնել մեծ մասամբ: Անտարակոյս մտածող մարդկանց անկեղծ ցանկութիւնն է, որ մեր տիկնայքը այդ զէնքը ձեռին չառնեն գրգռուած վիրաւորողների դէմ: Ուղեղը խոստովանենք սոցա ձգած նետը անզօր է վէրք բանալու համար. նետի շաւիղը կարճ է և հասնում է միայն մինչև արհամարանքը: Թող ուրեմն անհամեստութիւն չհամարուի մեր կողմից, եթէ Տիկին Էֆէնդեանցին խնդրենք, որ նա պ. Իգմիրեանի պօլէմիքը սառը լռութեամբ ընդունէ, որով կապացուցանէ, թէ մեր մանուկ բայց կոպիտ գրականութեան զարգացման ճիշդ նշանակութիւնը հասկանում է և յարգում. և ի հարկէ ոչ մի զարգացած մարդ չի դադարիլ հանգուցեալ Էֆէնդեանի բարի յիշատակը յարգել և նորա ամուսնոյ պատիւը ճանաչել, եթէ պ. Իգմիրեանի վերջին գրութեան պէս ուրիշ շատերն էլ դուրս գան:

Սեդրաք Մանդինեան.

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ.

Շամախու Հայ հասարակութեան բարեմիտ մասը երբ ամսոյս (Նոյեմ) 22-ին կարդաց աւետաբեր «Մեղուի» 44 որդ №-ում գրուած Վեհափառ Կաթողիկոսի ողորմածաբար շնորհքը — պարգևելով մեզ գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսին, իբրև առաջնորդ Թեմիս, նորա ուրախութեան չափ ու սահման չեղաւ: Զգացող սրտերն որոնելով միմեանց հաղորդում էին իւրեանց խնդակցութիւնը «կեցցէներ» ուղղելով Նորին Վեհափառութեան, Նորա հայրախնամ տնօրէնութեան համար: Բայց յետոյ 23-ին ամսոյս (Նոյեմ) մի մասնաւոր նամակից իմացանք, որ Նորին Վեհափառութիւնը փոխելով իւր կամքը՝ բարեհաճել է գեր. Հայր Պարգևեանցին շնորհել իւր նախկին վիճակին՝ Ալէքսանդրապոլին: Ցաւ է ասել՝ որչափ առաջին օրուայ ուրախութիւններս էր, կրկնապատիկ եղաւ երկրորդ օրուայ վշտակցութիւններս, ու չը համոզուելով կսկծանքներիս մեծութեան՝ համարձակեցանք ամսոյն 24-ին հեռագրել աղերսաբար Նորին Վեհափառութեան ի դիմաց հասարակութեան երեք արդոյ անձանց միջոցաւ, որ խնայելով մեր խղճալի հասարակութիւնն, ողորմութիւն անէ ըստ առաջնոյն պարգևելով մեզ գեր. Հայր Պարգևեանցին:

Մեծապատիւ խմբագիր. մենք մեր հասարակութեան հետ ի միասին յայտնում ենք Ձեզ մեր առ 'ի սրտէ շնորհակալութիւնն՝ որ ճանաչելով մեր Շամախեցիներիս կարիքն ու հասարակական պակասութիւններն, ասում էք. «Իսկ գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսին ցանկանում ենք ամենայն յաջողութիւն գործ դնել իւր անսպառելի եռանդն Շամախեցիների համար, որ վաղուց կարօտ էին այդպիսի գործունեայ հովուի»: Այժմ վաղուց է, որ Շամախին կարօտ էր մի հովուի, որ իւր խոհեմ բարքն ու վարքով և ժամանակի պահանջները հասկանալով քարոզէր և խրատէր ժողովուրդը՝ կենդանութիւն ներշնչելով նրան, որից զուրկ են եղել նորա մինչև ցայժմ լսած քարոզները:

Վերջացնելով մեր նամակը՝ դիմում ենք Նորին Վեհափառութեան հայրախնամ ողորմութեանն և աղերսում ամենախոնարհաբար, որ ուշ դարձնելով մեր արդի վիճակին՝ շնորհէ մեզ գեր. Սուքիաս եպիսկոպոս Պարգևեանցին, վասն զի 'ի վաղուց հետէ ազգային թերթերից տեղեկացած ենք և Շամախուն յարմար մի հովիւ տեսնում ենք գեր. Պարգևեանցի մէջ, այն Շամախու համար է խօսքս, որ դժբաղդաբար կրօնական բաժանմունքի կենդրոն է դառած:

29 Նոյեմ.
1875 ամ.
Շամախի.

Ս. Ալէքսանդրեանց.

ԳԱԶԵԹԱՃԻ ԱՂԱ.

Յանձախ պարապայ գործէս, յանձախ խելքս գլխս էկաւ, էսոր հմար հրամանքիդ էսքան վախտ գիր չէի գրի, հըմը հրամանքդ էլ օր, կաշիմ հէչ չես հարցնի, թէ ինչ եղաւ, ո՞ւր մնաց մեր գեղացի աղպէրը էսքան վաղտ խաբար չկայ էնոնց. էդպէս էլ բարեկամութիւն էղնի: Չէնքի կաշիմ օր, քէզի ուրիշ թամայ ընկերներ ես ճարի, էսոր հմար կուզես իմ թարիս տաս, օր էնոնց պոչը բռնես... Զիմ աչի, տիփյ քու թամայ եօլդաշներդ էլ, պատիւդ պահելով ահա՞յ էղան, որը քէզի աւ կուտայ թէ, դուքամ Թիֆլիս տպարանդ կը քանդեմ բոստան կշինեմ, որը գալէթդ Յութայէի բերանն աւիր ծամէ կը խըմ՞հի խըմ՞հի էն պարծենքդ Աղալար Աղասին ու գանգատ մարիկ խզմաթքեարը, մ՞ի մարդ էղ էնոնց հետ բարև Աստծու բարին էնէ:

Գազէթաճի աղա. Ահան թամամ սարիմ կէղնի, օր մեր քաղաքն ու մեր եկեղեցին մնացիր է առանց առաջնորդի անտէր անտիրական. չէնքի մեր առաջուայ առաջնորդը Սուքաս վարդապետն օր գնաց Ս. Էջմիածին, էլ էնոր տեղը մարդ չէկաւ: Էն Սուքաս վարդապետին մեր քաղքցիք շատ կուզէին ու շատ էլ պատուէին կը, չէնքի փորձեր էին էնոր բնութիւնը ու հասկցիր էին էնոր ժամին էրած լաւութիւնները: Էդոր հմար, էնոր գնալէն ետև երկու անգամ էլ խնդիրք գրեցին Սրբազան հօրը, օր խղճայ իրանց վրայ ու էլի էն վարդապետին յէտ ղրկէ: Քանիմ հեղ էլ իշտը հրամանքիդ գազէթի մէջ գրեցին էսոր հմար, օր Սրբազանը էս յէտ ղրկէ Սուքասին, եայ մէկ ուրիշիմ ջոկէ ու ղրկէ մեր քաղաքը: Հըմ՝ արի ու տես օր, գազէթաճի աղպէր, մեր Սրբազանը տէյմօրի հիմի հէչ առաջնորդ չէ ղրկի, զա՞ր էսքան կգրին, կխօսին իրան հետ չէն... Ախր էսպէս էլ բան կէղնի, մեր եկեղեցին անտէր անտիրական առանց գլխի ինչղ կրնայ մնայ. չէ օր մենք մեղք ենք, մեր ժողովուրդը մեղք է: Ընչի՞ է մեր Սրբազանը վարդապետներուն թափ էրի իրան քովը, թէ օր Սուքիաս վարդապետը իրան հարկաւոր է, թող մէ ուրիշիմ ղրկէ. փառք Աստուծու, ինչն է, բոլ վարդապետը Էջմիածին... էսպէս մէկ քաղաքմ, ուրտեղ Հայ քրիստոնեան բոլ, օր եկեղեցին առաջնորդ չունենայ ինչ հաւ, ինչ լաղեաթ կունենայ: Ախր առաջնորդ պտի էղնի, օր ժամը կարգի կանոնի տակ քցէ, քարոզներ խօսի ժողովուրդին ու ժողովուրդն էլ տաքնայ իրան սուրբ հաւատին:

Էհ՞ գազէթաճի աղպէր, միտքս շատ կայ, հըմը չիմ ուզի սիրտս առաջդ բանայ ու մէկ մէկ դարդերս արդ էնի: Մեր գեղացի աղպէրներէս Ս. Գրիգոր Լուսաւորչի հաբաղատ թուրը երեք գեղի մէջ, սկսիր ին ուրանալ իրանց լուս հաւատը ու քիչ քիչ ֆարմասօն դառնալ: Ախր չէ՞ օր մեր սուրբ պապերը իրանց կեանքը մատաղ էրին մեր հաւատի ու եկեղեցու հմար, օր ինչ է իրանցից յետև գալողները մնան էդ հաւատի մէջ ու մէկ մէկ օղրմիս տան: Ախր էսպէս էլ բան էղնի. Հայն էլ իրան լուս հաւատը փոխէ՞ մէկ դարդակ բանիմ հմար ու ֆարմասօն էղնի, վէ՞յ է տէսի. ամօթ չէ՞: Հայը առաջ իրան գլուխը կուտայ, թաք իրան հաւատը չէր փոխի. հիմի՞... յէնօրտանքը ինչղ օր գրիր էր „Միրոյ" աղպէրս, ֆարմասօններու տէրտէրն էկիր գեղէ գեղ էր ընկի ու ֆարմասօն դառածներու անունները մէկ մէկ գրեր կը: Էտոնց մէջն էլ մէկ փուչ տիրացումիմ կար օր կեղծաւորութին կէնէր Աստուածաշունչից. աւետարանից բաներ կխօսէր գեղացոց, հիմի էնորել ֆարմասօնի տէրտէր է էրի, ու գրքեր էր տուի, օր կարդայ ու գեղացոց դարձնէ:

Գազէթաճի աղա, ես իմ խելքովս կը դատիմ, օրէնօր առաջը կրնայ մէնակ տանի մեր սրբազան հէրը, թող քահանաներ ղրկէ էդ տեղերը, էրթան քարոզեն ժողովուրդին իրանց հաւատը յէտ դարձնին, օր չէղնի թէ մնացածներն էլ դառնալու աշէն:

Ես իմ գրութէնս խնդրիմ տպէ քու գազէթիդ մէջ, թէ օր չես տպի, կիմանամ օր հաստատ խռովեր ես ընձնից, ես էլ էն վաղը քէզի հետ վոչ բարև կըտամ, վոչ Աստծու բարին:

Ծառայութէն
քու ծանօթ գեղացի
Ի քաղ. Գիւմրի.

Բագուի մարդասիրական յանուն Գ. լուսաւորչի ընկերութիւնը ուղարկել էր ի հրատարակութիւն հետեւեալ ծանուցումն.

ՈՂՈՐՄԱԾ ՏԷՐ

Մարդասիրական ընկերութեան խորհրդական Անդամոց պաշտօնակատարութեան երեք տարւոյ ժամանակը յառաջիկայ 1876 թիւ յունվար ամսին վերջանում է: Անդամք համաձայն 17-դ յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ կանոնադրութեան պարտաւոր են հրաւիրել ընկերութեան բոլոր անդամներին, որ ընդհանուր ժողով կազմեն ընկերութեան գործոց կառավարութեան համար՝ նոր նախագահ և խորհրդական անդամներ ընտրելու. ուստի խորհուրդը խոնարհաբար խնդրում է Ձեզ, ողորմած տէր, շնորհ բերել ի 25 յունվարի 1876 ամի յետ կէս աւուր ի 5-դ ժամու, ներկայանալ ընդհանուր ժողովում, որ պիտի լինի ընկերութեան ուսումնարանի դահլիճումն, որպէս Անդամոց տարւոյս հաշիւը քննելու՝ նմանապէս և նոր անդամներ ընտրելու:

Անդամ խորհրդոյ Գ. Այվազեան.

—

Վաղը կիւրակէ ամսոյս 14-ին Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում Թիֆլիսի Հայ Թատրոնասէրները կը ներկայացնեն յօգուտ մի չքաւոր Հայ ուսանողի առաջին անգամ 1) «Բամբակ» կատակերգութիւնը հեղ. պարոն Պռօշեանցի. 2) «Էս էլ քի մոցիքլութին», հեղ. հանգուցեալ Տէր—Գրիգորեանցի և 3) «Մչեցի» վոդեվիլ մի արարուածով. Նոյնպէս առաջին անգամ. Տոմսակներ կարելի է գնել պ. պ. Հ. Էնֆիաճեանցի, Ծատուրեանցի և Աբովեանցի խանութներում և պ. Իվանովի ընթերցարանում:

—

Երկուշաբթի ամսոյս 8-ին Զմկեանի բենեֆիսն էր տեղւոյս ամարային Թատրոնում. Դահլիճը ըստ սովորականի դատարկ էր և հազիւ թէ մեր տաղանդաւոր դերասանը կարողանար իւր ծախքը հանել. Հայոց ներկայացման ճակատագիրը այդ է և դեռ երկար ժամանակ այդ կը լինի:

ՆԵՐՔԻՆ.

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ.

Թիֆլիսի Քաղաքագլուխ իշխան Թումանեանցը իւր խնդրանքով արձակուեցաւ արդէն պաշտօնից և հարկաւոր է այժմ ընտրել նոր քաղաքագլուխ:

Այս դիտաւորութեամբ անցեալ շաբաթ օրը (ամսոյս 6-ին) հրաւիրուած էին քաղաքիս իրաւասուները Թիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճում խորհրդածելու և ընտրողութիւն անելու. Այս ժողովում ներկայ են գտնուել 72 իրաւասուներից 58 հոգի և շատ մասնաւոր անձինք: Ժողովը իրաւասու պարոն Մատինեանցի առաջարկութեամբ յետաձգել է այս նոր ընտրողութիւնը մինչև վաղը, այն է մինչև ամսոյս 14-ը, որովհետև հարցի ծանրակշռութիւնն և այլ շտապով և ձեռաց ընտրողութիւնների ժամանակը արած սխալները չը կրկնելու ցանկութիւնը այդ բանն էր պահանջել:

Մենք բոլոր սրտով կը համակրենք իրաւասուների ժողովի այս վճռին, եթէ արդարև այս յետաձգութիւնը գործ լինի դրուած նոյա կողմից դէպի գործի օգուտը. այն է բազմակողմանի քննուած լինելն իրաւասուների կողմից այս պաշտօնին յարմար մարդիկ, կազմված լինելն նոցանից նախապէս այս գործի մասին խորհրդածելու համար մասնաւոր ժողովներ իրաւասուների խմբերից:

Բայց մենք մի փոքր ինչ կասկածում ենք, որ այս ժամանակամիջոցը այնպէս լինի գործածված ինչպէս մենք ասացինք:

Անցեալ ժողովի (ամսոյս 6-ի) իրաւասուների շատ մեծ թուով ներկայ գտնուելը առիթ է տալիս մեզ մի քանի խորհրդածութիւններ անելու. Թէպէտ քաղաքիս իրաւասուների ժողովներում թէ այս և թէ անցեալ տարիները շատ անգամ քննուելիս են եղել շատ ծանրակշիռ գործեր քաղաքիս տնտեսութեան վերաբերեալ, բայց մենք հաստատ կարող ենք ասել, որ այդ ժողովները շատ սակաւամարդ են եղել և մինչև անգամ բազմիցս ժողովները չեն կայացել որոշեալ թիւ իրաւասուների, այն է 24-ի չը ժողովուելուց: Բայց այս անգամ, երբ քաղաքագլխի ընտրողութեան համար է կազմուել ժողովը և թէ այլ այսպիսի դիպուածներում ժողովը միշտ բազմամարդ է լինում: Կարծես թէ իրաւասուների պարտաւորութիւն է միայն քաղաքային վարչութեան զանազան պաշտօնատարների ընտրողութիւնն և ոչ թէ քաղաքիս բազմաթիւ ամենակարևոր գործերի քննութիւնն և կարգաւորելը: Չը քննած գործերը մնում են մի և նոյն դրութեան մէջ, առանց շարժողութեան. գալիս են հարցեր այդ ժողովներում և մնում են դոքա էլի հարցեր և այդ չըքննած և անվճիռ մնացած հարցերը անցնում են ձեռքէ ձեռք մէկ ընտրած պաշտօնատարից միւսի ձեռքը, իբրև աւանդ մէկը միւսին պահ տալով:

Ցաւալի է այս դրութիւնն և ցաւ է պատճառում ամեն մի մտածող մարդու, բայց մենք իբրև ժամանակագիր պարտաւոր ենք գործերի այս անմխիթար լինելը գիր անցկացնելու:

Գալով նոր քաղաքագլխի ընտրութեան հարցին, մենք այժմ դիտաւորութիւն չունենք նորից երկար ու մէկ պատմելու այն յատկութիւնները, որ ցանկալի էր տեսնել ապագայ մեր քաղաքագլխի մէջ և որ մենք շատ անգամ յայտնել ենք մեր լրագրի միջոցով նախընթաց ընտրողութեան ժամանակ: Այժմ ունինք միայն մի քանի խօսք աւելացնելու:

Առհասարակ շատ դժուարանում են իրաւասուները լաւ քաղաքագլուխ գտնելու: Մենք այդ դժուարութիւնը կարծում ենք առաջանում է նորանից, որ ընտրելիները, ինչպէս փորձերից տեսանք, գլխաւորապէս եղել են արքունի ծառայութիւնից դուրս եկած և այլ պաշտօնական պարտաւորութիւններ չունեցող մարդկանցից: Ծառայութիւնն և կամ չարունակ մասնաւոր գործակատարութիւնը թուլանում է մարդ, երբ արդէն նա ձանձրանում է այդ գործերից և թէ աշխուժութիւն ու թէ եռանդը գործակատարութեան մէջ կորցնում է կամ մասամբ և կամ բոլորովին:

Այս շատ սխալ և վնասակար գաղափար է, որ կազմել են պ. պ. իրաւասուները մանաւանդ քաղաքագլխի ընտրողութեան վերաբերութեամբ: Ընդհակառակն այսպիսի ծանրակշիռ և բազմակողմանի պարապմունքներ ունեցող պաշտօնի համար հարկաւոր է ունենալ գործակատարութիւնից չը ձանձրացած, աժխուժն ու եռանդը չը կորցրած, մէկ խօսքով, ինչպէս ասում են չըմաշուած մարդ:

Աւելի լաւ կլինի և նպատակայարմար ընտրելիների ցուցակը [illegible] տրութեամբ պարապող այդ պաշտօնի յարմար մարդկանց, որոնք չեն կորցրել գործակատարութեան և առկուն խորհրդածութեան կարողութիւնը:

ԹԻՖԼԻՍՈՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԴԱՍԻ ՀԱՅՑԸ

Անցեալ տարուայ Մեղուի ընթերցողներին յայտնի է 11 համարում „մեր գործակատար դասը" վերնագրով յօդուածից մեր դասի նեղ շրջանը յարաբերութեամբ մեր տէրերին. Նոյնպէս յայտնի է 29 համարում նոյն վերնագրով յօդուածից մի առաջարկութիւն մեր գործակատար դասին, որտեղ համեմատաբար ցոյց էր տուել գործակատարների ընկերութեան հիմնելու կարիքը: Ինչպէս ես նախագուշակել էի, իմ առաջարկութիւնը ձայն բարբառոյ յանապատի դարձաւ մեր բազմաթիւ գործակատարներից շատերի համար. բայց զգայուն սրտերը չվհատուեցան և չյուսահատուեցան:

Այժմ ուրախութեամբ սրտի յայտնում ենք, որ նոյն մի քանի խոհուն գործակատարների շնորհիւ, այսօր իրագործվելու վերայ ենք տեսնում ընկերութիւնը. այո, ուրախ ենք, որ մեր ընկերներից շատերի համար միայն խորհելու նիւթ է եղած այս ամենակարեւոր խնդիրը, որը մի ամբողջ դասակարգի կեանքի խնդիր է:

Գործակատարների ընկերութիւնը կունենայ իւր ժողովարանը, որտեղ կժողովուին որոշեալ օրերում խօսելու, դատելու իրանց պաշտօնի վերաբերեալ հարցերի վերայ. ընդհանուր հաշուապահութեան դասեր լսելու, որից զուրկ են թէ գործակատարներն և թէ մեր տէրերը. և իւրաքանչիւրի համար ծանր է առանձին հաշուապահութեան ուսուցիչ վարձել. մանաւանդ որ եկող 1876 թ. գիլդիական հարկը կովկասում մացնելու առթիւ, պահանջվում է տէրութեան օրէնքով, որ վաճառականները կանոնաւոր հաշիւներ պահեն: Գործ. ընկերութիւնը կունենայ և խնայողական սնդուկ իւր անդամներին փոխադարձաբար օգնելու: Կկազմուի և գրականական երեկոներ և այլն:

Յոյս ունինք, որ մեր գործակատարներից շատերը, որոնք մինչև այժմ չէզոք էին, կշտապին մասնակցելու այս ընդհանուր գործին, որով կապացուցանեն թէ մենք՝ գործակատարներս, ևս ազատ մարդիկ ենք, մենք ևս մտածել գիտենք:

Գործակատար Սիսակ Սիմի.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

առևտրի և այլ արհեստներով պարապելու իրաւունքի համար տուրքի մասին

(Շարունակութիւն)

11. Պատրաստի գործած և անկար շինած [illegible] և ուրիշ հագուստ ստորին ժողովրդի:

12. Ամաններ փայտից, կաւից, բացի ճենապակեայ (ֆարֆորի) և ֆաեանսի և ապակեայ, հասարակը, չկրած: 13. Եղեգնից շինած փարսխներ, անջրպետներ, բաղկաթոռներ, աթոռներ, սեղաններ, հովանոցներ, ծաղկանոցներ և այլ գործուածներ: 14. զանազան կողովներ, ալիւրի փեթակ, յատակի խսրամատներ (պոլիչօթկ), խոշոր և մանր աւելներ, պարկեր, դամբեր, մաղեր, խարբալներ և մկնորսներ: 15. մանր և խոշոր սանդրներ, գլխի խոզանակներ (գլխի չօթկ), անուշահոտ ջրեր և իւղեր, սապոն, կօշկաներկ (վաքս), ծխելու փոշի և մոմեր: 16 երեխանց խաղալիք: 17. Ալիպաստրից և գիպսից շինած արձաններ և սորա նման այլ առարկաներ: 18. Ծաղիկներ և բոյսեր: 19. երգեցիկ թռչուններ: 20. բանեցրած կահ կարասիք, հին հագուստներ, կօրտանք և փալասներ: 21. հին գրքեր և պատկերներ: 22. Ծծմբափայտ:

Այս ցուցակը տեղական վարչութիւնների առաջարկութեամբ և ելևմտից նախարարի հաստատութեամբ կարող է փոփոխուել և լրացուել այլ առարկաներով:

Ծանօթութիւն. Այս ցուցակի 1, 2, 3, 12 և 18 յօդուածներում յիշուած առարկաները կարող են վաճառուել և սայլով մանածելով:

Գ. Փողերի մանրացնելը արկղներից և սեղաններից, նմանապէս ժամանակաւոր փայտեայ շինութիւններից բազարներում, բայց ոչ մշտական փողերի մանրացնելու կրպակներից:

Դ. Տօնավաճառներում կանոնով կամ սովորութեամբ սահմանած ժամանակներում ամեն տեսակ ապրանքների առուտուրը սայլերից և նաւերից և նմանապէս տօնավաճառի համար նշանակած տեղում եղած կրպակներից և ժամանակաւոր փայտեայ շինութիւններից:

Ծանօթութիւն: Տօնավաճառներում արած առուտուրը զանազանվում է բազարային օրերում արած առուտուրից նորանով, որ տօնավաճառներում կարելի է վաճառել ամեն տեսակ ապրանքներ նմանապէս և մանուֆակտուրայի և կոլոնիալի ապրանք, իսկ բազարային օրերում թոյլ է տրվում վաճառել միայն գիւղատնտեսական արդիւնքներ որոշած տեղերում սայլերից, նաւերից և նաւակներից:

Ե. Ամեն տեսակ գետի, լճային և ծովային նաւեր շինելը, կարկատելը և պահելը, բայց այն շոգենաւերը, որ ապրանքների և ճանապարհորդների տեղափոխելու համար են:

Ծանօթութիւն: Ափերի մօտ նաւագնացութիւնը թոյլ է տրվում միայն ռուսաց հպատակներին: Նմանապէս միայն ռուսաց հպատակներին է պատկանում ռուսաց առևտրական դրօշակների բարձրացնելու իրաւունքը:

Զ. Կայարանների համար ձիաների պահելը և առհասարակ տեղափոխական արհեստը, այն է կառապանութեան գործարանները, ապրանքների և ճանապարհորդների տեղափոխելու համար սարքուած գրասենեակները և գործարանները և փոստայի կայարանները:

Ծանօթութիւն: Այս յօդուածում յիշուած կառապանական գործարաններին չեն պատկանում այն տներն, ուր կենում են իրանք անձամբ կառապանութեամբ պարապողները, առանց վարձկան վարձաւորների:

Է. Գործարանների համար գործիքների և մեքենաների և նմանապէս հողագործական գործիքների, քիմիական բաղադրութիւնների և ներկերի պատրաստելը և սեփական գործարաններում վաճառելը:

Ը. Ուսումնական, առողջապահական և բժշկական հաստատութիւնների, դեղատանների և գրավաճառանոցների պահելը բոլոր քաղաքներում և գիւղերում, բաց առնելով երկու մայրաքաղաքները:

5. Գիւղերի ամեն կոչման բնակիչներին թոյլ է տրվում վաճառել առանց տուրքեր վճարելու ամեն տեսակ պաշարեղէն և շինական արտադրութիւններ և նմանապէս գիւղական ձեռագործներ, որ ցոյց են տուած այս յօդուածին կցած ցուցակում, բազարներում, շուկաներում և նաւահանգստներում, քաղաքներում և գիւղերում, սայլերից, նաւերից, նաւակներից, տեփուրներից և սնդուկներից:

Ցուցակ առարկաների: 1. ձեռքով մանուած թելեր, պարաններ (թոկեր) գործուած դամբեր. 2. սփրթ փունջ կապած, տլլեայ ծառի կեղևից շինուած իրեր, փախթներ (ճիլոպներ) և կեղևից հիւսուած տոպրներ. 3. պարկի, շալկի և անձրևոցիկների (սալֆեթկաների) քաթան, պարկեր, երեսսրբիչներ. 4. գոյնզգոյն անկուած վշից և կանեփից. 5. մահուտ հաստ և դորշ և ստափաթաթան. 6. գործուած ապրանքներ բամբակէ թելից և բրդից: 7. անկար անպատրաստ բրդից և մազից շինուած ապրանք, թաթպաններ, ոտնամաններ, գտակներ և այլն. 8. կողովներ ծառի կեղևներից, ճիւղերից և եղեգնից: 9. փայտեայ ամաններ և ամեն տեսակ կահ կարասիք: 10. անիւներ, անիւի շառաւիղներ, անիւի դունդեր, սայլի սամիներ, սահնակի փայտեր և սայլերի և սահնակների այլ պատկանելիքներ: 11. ձիւթն և խէժ: 12. և այլ սորա նման շինական տնային գործուածներ, որոնց վաճառելը թոյլ կը տրուի ելևմտից նախարարի կարգադրութեամբ, տեղական գլխաւոր կառավարութեան միջնորդութեամբ:

6. Արուեստաւորական և գործարանական գործատները և նմանապէս գիւղատնտեսական գործատները, այն է խնոցաբանները, գիրանների սղոցարանները և աղիւսագործութեան և այլ սորա նման գործարանները, որ պահում են կալուածատէրերը իրանց կալուածքներում և կամ կապալառուները և գիւղական այլ բնակիչները իրանց բնակութեան տեղերում, եթէ ունին ոչ աւելի 16 բանուորից և չեն գործ ածում շոգիով կամ ջրով գործող մեքենաներ և գործիքներ, ազատ են տուրքերի վճարելուց:

Ծանօթութիւն: Տասնուհինգ տարուց չհասածները երկուսը մէկ չափհաս բանուոր են համարվում:

7. Ջրաղացները, հողմաղացները և նմանապէս շոգիով գործող ջրաղացները ազատ են տուրքերի վճարելուց, եթէ չունին 16 բանուորից աւելի և գտնվում են կալուածատէրերի գետինների վրայ քաղաքներից դուրս և կամ այն շինական հասարակութեան ձեռին եղած գետինների վրայ, որին պատկանում է կալուածատէրը:

Ծանօթութիւն: Այն ջրաղացների պահելը, որոնք ունին ոչ աւելի քան չորս աչք թոյլ է տրուած մանր առևտրի այն վկայականներով և տոմսակներով, որ նշանակած են հողմաղացների համար այն պայմանով միայն, որ այս զիջողութիւնը համարուի իբրև ժամանակաւոր միջոց և որ երեք տարուց յետոյ և աւելի առաջ, եթէ այդ յարմար համարուի, փորձերի ցուցմամբ առանձին առաջարկութիւն լինի սորա մասին սահմանուած կարգով:

8. Քաղաքներում ամեն կոչման մարդկանց թոյլ է տրվում առանց առևտրական իրաւունքի համար տուրք վճարելու վաճառել իրանց սեփական ձեռագործները բայց ոչ խանութներից և այլ մշտական վաճառատեղերից:

(Կ'շարունակվի)

Հանգուցեալ վ. Արշակունեաց տունը, նոյեմբերի 28-ին աճրդախօսութեամբ արքիզայի պարտքի պատճառով վաճառուեցաւ: Տունը մնաց պ. պ. Գր. Խզմիրեանցին և Մելիքեանցին վաթսուն և հինգ հազար ռուբլիով. Այս խրօղութիւնը շատ զարմացրեց Թիֆլիսի հասարակութեանը այն պատճառաւ, որ գնողներից մինը՝ պ. Գր. Խզմիրեանցը հաւատարմատար էր տիկին Արշակունեաց և փոխանակ պաշտպանելու իւր հաւատարմատուի շահերը, յանկարծ նորա տանտէրը հանդիսացաւ. Նորերումս լուր տարածուեցաւ, թէ աճուրդը չէ հաստատուել և. տիկին Արշակունեաց նոր հաւատարմատարը դատ է բանալու պ. Գր. Խզմիրեանցի դէմ, նորա անհոգ խնամատարութեան մասին: Հաւատանք թէ ոչ:

—

Թիֆլիզի քաղաքագլուխ իշխան Եգոր Թումանեանցը, որ իւր ընտրութիւնից յետոյ մի փոքր միջոց միայն վարեց իւր պաշտօնը, հրաժարուեցաւ իւր պաշտօնից: Այժմ քաղաքային խորհուրդը պիտի նոր ընտրութիւն անելու, որ նշանակուած էր ամսոյս 6-ին և յետաձգվեցաւ ց 14-ն վաղը առաւօտեան ժամը 11-ին: Ընդվանում են շատ անձինք, որոնք ցանկանում են արժանանալ այդ բարձր հասարակական կոչմանը, բայց այդ պարոններից շատերը ոչ մտածել են և ոչ հասկանում են այդ պաշտօնի ծանրութիւնը, այլ լոկ փառասիրութիւնից դրդած կանդիդատ են ձևանում. ուստի խորհուրդը մեծ զգուշութեամբ պէտք է դիմէ ընտրութեան: Հետամուտ լինելով հասարակական կարծեաց՝ մենք եկանք այն եզրակացութեանը, որ դեռ ևս ոչ մի անձնի վերայ չեն կանգնել. Հարցի դժուարութիւնից է թէ անհոգութիւնից, այդ թող ինքը խորհուրդը պատասխանէ:

—

Ախալցխայից մեզ հաղորդում են, չը նայելով որ այս տարի ձմեռը վաղ է սկսել, բայց հոգաբարձուները չեն էլ մտածում ոչ վառարանները կարգի բերելու և ոչ էլ վառելու: Սա էլ մի նոր ձևի խնայողութիւն է, որ հնարել են Ախալցխայի հոգաբարձուները:

—

»Тиф. Вѣст».» լրագրում կարդում ենք, որ Ծովկայի գիւղերում տարածուած է դարհուրելի աստղիկան ախտը: Երկու գիւղեր բոլորովին մեծից մինչև փոքրը վարակուած են այդ ախտով: Բժշկական օգնութիւն տալու համար հիւանդներին ուղարկած է այնտեղ ամբողջ յանձնաժողով, որ կազմուած է երկու բժիշկներից, մանկաբարձից և ֆելդշերներից:

Ամսոյս 5-ին ուրբաթ Ներսիսեան հին ուսումնարանի նոր շինած խանութներում եղաւ հրդեհ, որ շուտով հանգցրին հրդեհաշէջները: Վնասը աննշան:

—

Ընթերցողներ, ներքին բաժնում տպում ենք մեր աշխատակից պ. Սիսակ Սիմեւոյ նամակը, որով պարոնը յայտնում է թէ արդէն կազմելու վերայ է գործակատար դասի ընկերութիւնը. որի կարևորութեան մասին դեռ անցեալ տարի Մեղուի մէջ քանիցս խօսուեցաւ: Շնորհաւորում ենք մեր գործակատարների նոր ձեռնարկութիւնն և ցանկանում ենք, որ մեր բոլոր գործակատարները մասնակցեն այդ ընկերութեան և արդիւնաւոր գործունէութեամբ համակրելի կացուցանեն զորան և ոչ թէ այլ ընկերութեանց նման միայն խղճախառն և պարի ասպարէզ դարձնեն:

—

Ամսոյս 8 ին Գուդաուրից հեռագրում են, որ հաղորդակցութիւնը դադարած է հողմերի պատճառաւ. եղանակը պարզ է. Գուդաուրից փոստաները ճանապարհ գցած են. իսկ ճանապարհորդները մնացած են այնտեղ:

—

Ամսոյս 2ին եղած փոթորիկը Սև ծովի վերայ Բաթումի և Տրապիզոնի մէջ ափին է գցել մի Տաճիկ շոգենաւ. Ճանապարհորդների և նաւաստիների վիճակը անյայտ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագիրը Կ. Պօլսից հաղորդում են, որ հրատարակվել է Սուլթանի ֆիրմանը, որով խոստացվում է գիւղերին իրաւունք ընտրելու դատարանի անդամներ և գաւառական ոստիկանական խորհուրդներ: Հարկերի աւելի արդարացի բաժանումն և հարկահանների ընտրութիւնը նոյն իսկ ժողովրդից. բոլոր հպատակների սեպհականութեան պաշտպանութիւնը, ազատութիւն նոցա հոգևոր իշխանութեան: Քրիստոնեաներին տրվում է իրաւունք ամենայն պաշտօնի հասնելու: Իրաւունք է տրվում կալուածական սեպհականութիւն ունենալու: Այդ արտօնութիւններից կարող են օգուտ քաղել միայն հաւատարիմ հպատակները: Յանձնաժողովը հետևում է այդ միջոցների իրագործելուն:

—

Ֆրանսիայի Ազգային ժողովում շարունակվում են 75 սենատորների ընտրութիւնները: Չնայելով որ նախարարութեան նախագահ Բիւֆէն հաւատարիմ է իւր յետադիմական սկզբունքին, ամենայն ջանք գործ է դնում, որ սենատորները ընտրվին հակահասարակապետական կուսակցութիւններից. բայց այնուամենայնիւ ձախակողմեանները կամ հասարակապետականները մեծ յաջողութիւն ունին այդ ընտրութեանց ժամանակ: Սենատորների մեծ բազմութիւնը ընտրվում է հասարակապետականներից: Թէպէտ այդ իրողութիւնը հաւասար է անհաւատարմութիւն յայտնելուն Բիւֆէի կառավարութեան, բայց այնուամենայնիւ նա մտադիր չէ հրաժարվելու իւր բարձր պաշտօնից գրաւած ունելով Մակ—Մահոնի հաւատարմութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Դավրէժից Նախիջևան.

(Շարունակութիւն)

Տես Մեղու № 46

—

Զ.

Ցերեկուան պայծառ աստղն արդէն իւր փայլուն ճաճանչները սկսել էր արձակել երկրի վերայ և առաւօտեան երգեցիկ թռչունները բիւր զայլայլիկս էին յօրինում, երբ սթափեցանք Մորփէոսի մեղ ազդած քնից. իմանալով, որ Արաքս շատ մօտ է Սուճայից, իմ սիրտս սկսաւ թնդալ. բիւր հայրենի մտածմունք գրաւեցին իմ միտքը. ահա ես տեսնելու եմ Արաքսը, գոռոզ Արաքսը, հայրենեաց փառքը, ականատես եմ լինելու նորա կոհակների ոստոստման, այն կոհակների՝ որոնք շատ անգամ արնաշաղախ են եղել Արաքսի հարազատ որդիների արեամբ. Ես երևակայում էի իմ մէջ Արաքսի գոռում ու գոչումը, նորա փրփրադէզ ալիքներն և օձապտոյտ ՚մանուածներով յառաջ խաղալը... բայց, Հայաստանում ճանապարհորդողը միշտ ենթակայ է տխուր երևոյթների, դառն խորհրդածութիւնների......

Սուճայից դուրս եկանք: Այս մի մեծ գիւղ է Թիւրքաբնակ, բնակչաց մեծ մասն աւազակ են և առաջին պարսկական գիւղն է սահմանագլխում. Անշուշտ սա ժամանակով Հայի չէր է եղել... Սուճայից մինչև Ջուլֆայ կամ Արաքսի եզրը ճանապարհը հարթ և տափարակ է և կէս ժամու հեռաւորութիւն ունի: Ցրնթացս ճանապարհի Թուրքերի մէկը սկսաւ պատմել Ստեփանոս Նախավկայ վանքի ունեցածութիւնը, առ որն նոքա մի առանձին յարգանք են ցուցանում, և հին Ջուղայի տեղն մատով ցոյց տուեց: Այդ միջոցին Արաքսի ջրերն ՚ի հեռուստ երևացին, սիրտս սկսաւ տրոփել. Ստեփանոս Նախավկայ և Հին-Ջուղայ անուանքն տրտմութեամբ լցրին իմ սիրտը: Քանի մօտենում էինք՝ այնքան յուզմունքս շատանում էր. բուռն երևակայութիւնը իմ աչքիս առաջև պատկերացնում էր այն սարսափելի անցքն, որ 270 տարի յառաջ պատահել էր Հին-Ջուղայու Հայերին. ահա Շահաբաս, հեծած իւր արքայական զեղաղատի վերայ կանգնած է և հրամայում է իւր զօրքին յառաջ վարել թշուառ Հայ ժողովուրդը: Խեղդուող ծերերի աղաղակը, մարց կականալից ողբը, անմեղ մանկանց և օրիորդաց գոռում ու գոչումը, վայրագ զինուորների կատաղութիւնն և անգթութիւնը, նիզակների վերայ ցցուած գլուխները սարսափ են ազդում ինձ, ես գնում եմ առանց հասկանալու, մեքենայաբար, կարծում եմ, որ երբ Արաքսի մօտ հասնեմ, Նորան արնաշաղախ եմ տեսնելու, իմ թշուառ Հայ եղբայրների ձայնն եմ լսելու, որ օգնութիւն են կանչում. ես պանում եմ—քաջալերութիւն եմ տալիս, անխրախ, վայրենի՛ զինուոր, ինչո՞ւ քաշքշում ես այդ հրեշտականման կոյսը, ահա կը սատակեցնեմ քեզ, ասում եմ, ձեռս տանում սրիս, որ խլեմ, երկու կտոր անեմ, բայց կողմս սուր չը կայ...

Միայն Արաքսի վշվշալն ինձ իրականութեան բերաւ. ես կանգնած էի ցանկացեալ գետի առաջև. Նա ընթանում ՚էր յամրաքայլ, պղտոր և մռնչելով. դարուց դարուց յիշատակներ ծածկում էր նա իւր խորքերում. խռոված էր նա և կարծես լռելեայն հեծում էր........ Այստեղ գրեթէ մեքենայաբար իմ շրթունքներս մրմնջացին «Մայր Արաքսի ափերով» երգը:

Մենք դեռ Պարսից սահմանումն էինք, Ջուղայ կոչուած տեղում, ուր Պարսից սուրհանդակատունն և պարսկական ու Հնդկա-Անգղիական հեռագրատունքն են: Ամառն, ինչպէս ասում են, անտանելի տաք է լինում այստեղ, օդն ջերմալից է և տենդոտ. պարտէզ կամ այգիք չը կան, միայն հովը երբեմն երբեմն շարժում է մի քանի անպտուղ ծառեր, աստ անդ ցրուած: փոքր նաւակներով անցանք միւս եզրըն, ուր կոխեցինք Ռուսաց հողի վերայ և կոմիսարին սովորական յարգանքը մատուցանելուց յետ, նստեցինք փոստայի փոքր կառքն ու մի քանի ժամ ճանապարհորդելով մի դաշտի անապատով, վերջապէս ժամանեցինք Նախիջևան քաղաքն, եթէ միայն կարելի է սորան քաղաք կոչել:

Հ. Առաքելեանց.

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ղուլպայ Պ. Խուրշուտ Յարութիւնեանցին. Ձեր նամակը ստացանք, ուր ցոյց էք տալի Գրիգոր Իզմիրեանցի այլանդակ գործողութիւնները: Մենք աւելորդ համարեցինք տպել նամակն այն պատճառով, որ Իզմիրեանցի վերջին ժամանակուայ գործողութիւնքը ցոյց տուին նորա իսկական պատկերը: Իզմիրեանցի աղաղակներն ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի յուսահատական կական,........

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ին

Ոսկին (պօլուիմպերեալ)...	6 — 15
Արծաթը (հին մանէթ)...	1 — 10
Հին աբասան. (5 հատը)	1 — 2
Փոխանակագիր Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա...	6 — 56
Դաւրէժունը	4 — 50
Լոնդոնի կուրսը ...	7 — 59
Մարսելինը	$332^{1}/_{4}$,,
Մոկկան կոֆէ........	19 — ,,
Մարտինիկոյին ...	13 — ,,
Լիւանին.........	17 — ,,
Շաքարը բրուպկի......	7 — 80
Միւս տեսակ....	7 — 60
Շաքարաւազը	6 — 40
Զաղրանիցի տրանդիտը.......	4 — 75
Մարս վճարածը...............	7 — $62^{1}/_{2}$
Մետաքսը Նուխու լաւը.	108 — ,,
Խմերէթունը......	45 — ,,
Բուրդը Թուշու.........	7 — 50
Թարաքամի......	,, — ,,
Պղպեղը...............	10 — ,,
Արճիճն	3 — 40
Օճառ (սապոն)	3 — 20
Ալիւր հասարակ.........	,, — 60
Բամբակը Երևանի......	5 — 30
Ամերիկ. սերմ.....	6 — 30
Վերմիշել եւ մակ. Ռուս.	5 — 40
Օդեսու..........	5 — 20
Տեղական........	4 — 40
Սապոյ սպիտակն	4 — ,,
Գրեչիշնի.........	2 — 10
Պերլովիյ.........	3 — 60
Կրուպայ Մաննիյ.........	2 — 80
Տորոնը տեղական......	8 — ,,
Որդան կարմիր առաջինը	132 — 10
,, ,, Երկրորդն........	98 — 20
,, ,, Խմէբեթու........	123 — ,,
Ծխախոտը Տրապիզօն լաւն	15 — 40
Սամսոնը 10-ից	50ը — ,,
Կեօրալի 25-ից	75ը — ,,
Բոֆրայի 14-ից	50ը — ,,
Լատարի բիլեթն առաջին	220 — ,,
Երկրորդը........	216 — ,,
Մոմը բնաճարպի (ստէար.)	10 — 20
Ճրագուլի.........	5 — 20
Երկաթը ծողաձև (բրուսկ)	3 — 30
Տախտ. (լիստով.)	2 — 70
Մեխացուն	3 — 20
Ցինկ	5 — 95
Պղինձը անգղիու..........	13 — 40
Տեղական.........	10 — 45
Անագը (կլայեկ)............	13 — 40
Անուշադիրը (նիշադր.)	7 — 20
Ալիւրը հասարակ.........	,, — 90
Պեասնովի (ջվալը)	14 — 50
Ախվերդովինը 1,	12 — 50
2,	10 — 20
3,	9 — 40
Բրինձը Լանքորանի......	2 — 20
Գարին..................	,, — 60
Սպիրտ 83 աստիճանի...	6 — 20
Նաւթը..................	2 — 60
Լեղակը առաջինը.........	150 — ,,
,, ,, Երկրորդն........,	135 — ,,
Իւղը	10 — ,,
Ձէթը կտաւատի...........	4 — ,,
Կնճիթ (քունջութի)......	6 — ,,
Շիրն......................	2 — 60
Գ. դտորն..................	6 — 70
Մեղրամոմ	20 — ,,
Խոնկն..................	8 — ,,
Ջաղն..................	1 — 40

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Բոլոր տեղերը, (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր, բացի կիրակի օրից:

ԵՐԵՒԱՆ — Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ — Չորեքշաբթի և ուրբաթ

ՆՈՐԲԱՅԱԶԻԴ — Չորեքշաբթի:

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՅ ԳՏՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ — Ամեն օր, բացի կիրակի:

ՈՒԳԴԻԴ — Չորեքշաբթի:

ՕԶՈՒՐԳԷԹ — Երկուշաբթի և ուրբաթ,

ԱԽԱԼՑԽԱ — Երկուշաբթի և ուրբաթ,

ԲՈՐԺՈՄ — Երկուշաբթի և ուրբաթ. իսկ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր. բացի կիրակի օրից:

ԲԵԼԻ-ԿԼԻՒՉ (Աղբուլաղ) — Երկուշաբթի և ուրբաթ,

ԲԱՔՈՒ (Ելիզավետպօլի վերայ) — Երկուշաբթի, հինգշաբթի և ուրբաթ:

ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ-ԿՈԼՈԴՑԻ (Թուտուրմէշայի վերայ) և ԶԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԷԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽԻ — Երեքշաբթի և շաբաթ.

—

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(սեպտեմբերի 1-ից)

I

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔ.

ԹԻՖԼԻԶԻՑ դուրս է գալիս № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 36 ր., հասնում է ԽԱՇՈՒՐ 2ժ. զկնի ճաշի և ՓՕԹԻ — գիշերուայ 11 ժ 44 ր.:

ՓՕԹՈՒՑ դուրս է գալիս № 1 գնացքը առաւօտեան 8 ժ.40 ր. հասնում է ԽԱՇՈՒՐ 5 ժ. 41 ր. զկնի ճաշի և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 ժ 16 րոպ.

II

ԽԱՌՆ ԳՆԱՑՔ.

ԹԻՖԼԻԶԻՑ դուրս է գալիս № 8 գնացքը երեկոյեան 4 ժ. 54, հասնում է ԽԱՇՈՒՐ գիշերուայ 11 ժ. 10 ր. և ՍՈՒՐԱՄ — գիշերուայ 11 ժ. 37 ր.:

ՍՈՒՐԱՄԻՑ դուրս է գալիս № 7 գնացքը գիշերուայ 12 ժ. 37 ր. հասնում է ԽԱՇՈՒՐ գիշերուայ 12 ժ. 51 ր. և ԹԻՖԼԻԶ — առաւօտեան 7 ժ. 24 ր.

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում բացէ Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետ 3 ժամը: —

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնվում է Սեմինարիայի դիմացը Ց. Չիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժամը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պ. Գ. ԻԶՄԻՐԵԱՆՑԻՆ.

Պ. Իզմիրեանց, կարդացինք ձեր իբրև պատասխանը ինձ, որ բաժանել էիք Մշակի հետ. դա չէ պատասխանի, այլ ձեր ազգային դրութեան արտայայտիչ յիշոցաբանութիւն, որի նպատակն է ցոյց տալ թէ դուք ազգասէր, լաւ և բարի մարդ էք, իսկ մենք վնասակար և չար: Մենք մեզ ձեզ նման պաշտպանելու կարիք չունինք յիշոցներով: Դուք կուրացել էք անձնադովութեան կրքով — դա յատուկ է բուն եսական և անձնասէր անձանց:

Պարոն, դուք, ինչպէս երևում է, ամենևին մարդկային պարտականութեան վերայ հասկացողութիւն չունիք. դուք որ և իցէ պարտականութիւն կատարելը պարծանք էք համարում, դուք կարծում էք, որ ձեր մինչև անգամ որ և իցէ աննշան խօսքն ազգ, հասարակութիւն անձներ պարտական է կացուցանում ձեզ երախտագէտ լինելու — դա անհեթեթ եսականութիւն է՝ որ մարդուս համար անփնական է: Թողնելով մի կողմ բոլոր անձնադովութիւններդ և յիշոցներդ՝ դառնանք դէպի գործը:

Թէմիստոկլէսի և Միլտիադէսի մասին գրածներդ մի տղայի դատողութիւնից չէ զանազանվում: Ձեզ համար պատմութեան մէջ անուն, տեղ և ժամանակ նշանակութիւն չունին: ուրեմն պատմութիւնը ձեր համար պառաւի հեքիաթ է, ինչպէս ամեն ձեր գիտութիւնը առասպել է:

Մենք ձեր անձը աչքի առաջ չենք ունեցել, մենք ձեր կոպիտ վարմունքը Թեմիստոկլէսի վարմունքի հետ համեմատելը միայն սրբապղծութիւն էինք համարել. ինչո՞ւ աղաւաղում էք մեր ասածը. բայց այն ևս իմացէք, որ Մարտիրոսը չէ կարող Աղէքսանդր Մեծի գործածը գործել և ոչ Գ. Իզմիրեանցը Թեմիստոկլես դառնալ. վասն զի Աթէնքը կարող էր ծնանել Թեմիստոկլէս — իսկ Թիֆլիսի կեանքը երբէք ոչ, այլ սա կարող է միայն Գ. Իզմիրեանցներ ծնել. հասկացա՞ք:

Գանք հանգուցեալ Եփրեմեանցի կտակին: Դուք պ. Իզմիրեանց, ասում էք, որ Հանգուցեալը ձեզ միայն ծանօթ է՝ եղել: Միթէ դուք չէք հասկացաք, որ նորա ձեզ հրաւիրելու առիթը ոչ թէ առ ձեզ ունեցած, այլ առ հանգուցեալ Սվեչնիկեանցի և Տէր-Միքայէլեանցի ունեցած հաւատարմութիւնն էր, որոնք իբրև նորա ընկերներ փորձանքներում գրաւել էին այն իրանց ազնուութեամբ: Պարզը կուզէք իմանալ: Վերջինները, որոց յայտնել էր Հանգուցեալն իւր կամքը. կամենալով, որ ռուսերէն մի կանոնաւոր կտակ գրվի, ապագայումն էլ ատեաններում և մասնաւոր անձանց հետ ունենալիք գործերի համար խնդիրներ գրող ունենան, ձեզ իբրև այն ժամանակուան իրաւաբանի հրաւիրել տուին և ընկերակցրին իրանց իբրև կտակակատար: Իսկ այն որ ասում էք թէ Հանգուցեալը առանց կարդալու կտակը ստորագրեց, որին այնպիսի մեծ նշանակութիւն էք տալիս յօդուած ձեր, շատ պարզ բան է՝ սեւագրութիւնը կարդացած էր, երկու հաւատարմութիւնը գրաւած ընկերները հանգուցեալ Սվեչնիկեանցն ու Տէր Միքայէլեանցն ներկայ. էլ ինչ կարիք կար կարդալու, եթէ Հանգուցեալը ձեզ կասկածէր էլ, երկու հանգուցեալ կտակակատարների մասին բնաւ տեղիք չունէր կասկածելու: Այլ ինչպէս դուք այդ գործում ոչ այլ ինչ էք եղել, եթէ ոչ Հանգուցելոյ կամքը թղթի անցնող գործիք. որպիսի դեր ձեր ամեն գործերում խաղացել էք չունենալով բնաւ հեղինակութիւն. ինչպէս և այսօր ձեր յօդուածներով, որպէս ասում են չար լեզուները, դուք գործիք էք մէկի ձեռքին և այն էլ — մի տղէտ քահանայի: Իսկ Հանգուցեալ Եփրեմեանցի փողերը Պօլիս խրկելու մասին, այո կը յիշենք, որ մի անգամ ասաց — մեզ հանգուցեալ Սվեչնիկեանցն և մենք ծիծաղեցինք. ասելով, թէ պ. Գ. Իզմիրեանցի գլխին ինչ ասես գալիս է: Չը գիտենք, թէ Ներսիսեան դպրոցին կտակած փողը որ հիմա վերայ Պօլիս պիտի խրկէիք, կամ այդ կը լինէր կտակողի կամքը սրբութեամբ կատարել. բայց ինչ. կտակի սրբութիւն չը կայ, երևի, պ. Իզմիրեանցի համար: Դա էլ օյիններից մէկն էր փողերը հոգաբարձութեան չը յանձնելու համար:

Աբէլեանցի մասին հերիք չէր ձեզ մեր ասածը: Մենք անցեալ հոգաբարձութեան ժամանակ եղածը յիշած էլ չենք, երբ մենք իրան քըս յայտարարութիւն ունինք տուած Աբէլեանցի հրաւէրի մասին: Գործը խառնելու համար ինչո՞ւ էք նախկին հոգաբարձուաց գործերը ներկաների գործերի հետ խառնում: Խօսքը 1872 թուականի հեռագրի վերայ էր: Զարմանում ենք պ. Իզմիրեանց ձեր միամտութեան վերայ: Մենք ձեզ չը խրկեցինք այն հեռագիրը, որովհետև մեր անունով էր և բնաւ չենք ծածկել, ինչպէս դուք ստում էք, որովհետև հէնց ստանալիս շատերի ներկայութեամբ կարդացինք և թարգմանեցինք, այլ հոգաբարձութեան ներկայացնելու համար սպասեցինք, որ նիստում որքան կարելի է շատերը ներկայ լինեն և երբ կարդացինք ներկայ էին հէնց ձեր յիշած հոգաբարձուների մեծ մասը, որոնք ընտանեբար խորհրդակցել էին ձեզ հետ այդ մասին: Հէնց այդպիսի ընտանեբար խորհրդակցութիւնքն արտաքոյ հոգաբարձական խորհրդարանի, ուսումնարանը տակն ու վրայ արին: Մենք ստացանք այդ ժողովում այն պատասխանը, որ մեր անցեալ յօդուածում յիշել էինք: Միթէ այնքան հոգաբարձուաց մէջ չը գտնվեցաւ այնքան բարոյական ոյժ, որ մեր ներկայութեամբ ճշմարիտը խօսէին և վախից սոխվէին սուտ ասել — մենք այդ չենք կարող ընդունել: Իսկ ինչ կը վերաբերի 1874 թուականի հեռագրին, որ իբրև պէտք է ստանայիք և չէք ստացել, և որոյ մասին մենք տեղեկութիւն անգամ չունինք, բայց դուք ակնարկում էք թէ գուցէ այն մենք ստացել ենք և ծածկել. ձեզ հրապարակաւ ասում ենք, որ դուք չունիք իրաւունք մեզ ձեր չափով չափելու:

Ձեր յայտնած կասկածը կամ ապացուցէք, կամ հրապարակաւ ընդունեցէք մեր արհամարանքը:

Պ. Իզմիրեանց, — դուք յիշելով էլի ուսուցչաց իրաւամբ սեպտեմբերի ռոճիկի պահանջելն, յիշում էք, որ մենք իբրև քաւել ենք մեր յանցանքը մասամբ Հայոց պատմութեան դասերը ձրի տալով, որ արել ենք իբրև թէ հոգաբարձութեան շողոքորթելու համար: Մենք դորա վերայ բնաւ մտածած էլ չենք, չենք էլ յայտնել այդպիսի միտք: Իրաւ է մենք ոչ թէ Հայոց պատմութեան միայն, այլ և այլ շատ դասեր տուել, և պաշտօններ կատարել ձրի: Բայց այդ արել ենք ոչ մեղք քաւելու և ոչ էլ հոգաբարձութիւնը շողոքորթելու համար, այլ իբրև պարտք. իսկ շողոքորթելու ցանկութիւնը երևի հանել էք «Մեղուի» 1872 թուականի յօդուածներից հոգաբարձութեանդ մասին, և այս յօդուածների շարքումն էր «Հաւնար հոնար իշուն» ֆէլիետօնը, լաւ շողոքորթութիւն է ձեզ:

Դուք պ. Գ. Իզմիրեանց, ուրանալով ձեր երիցսափ կանգնած ներողութիւն խնդրելը ձեր կոպտութեան և անվայել վարմունքի համար 20-ից աւելի անձանց առաջ — չէք ամաչում, ստախօսել: Մենք ձեզ ենք յանձնում ընտրել վկայութեան համար ում կուզէք այն անձինքներից, որոնք ներկայ էին նոյն ժողովում՝ հոգաբարձու լինին նոքա, թէ ուսուցիչ: Ապա նոցա վկայութիւնը համաձայնեցէք հրատարակելու, որ երևի թէ ով է ստախօսը՝ մենք թէ դուք: Իսկ ինչ կը վերաբերի ձեր մեղուական կոչուած ուսուցիչների շահասիրութեանը, նոքա իւրեանց ազատ կամքով և ձրի աշխատանքով այնպիսի ծառայութիւնք արած են Հայ հասարակութեան, որ դուք երազել անգամ չէք կարող: Նոքա այնքան բարձր են ձեզանից իւրեանց մտաւոր և բարոյական զարգացմամբ, ուր դուք ընդունակ էլ չէք ոչ ըմբռնելու նոցա գաղափարներն և ոչ էլ հասկանալու նոցա գործունէութիւնը Հայ հասարակութեան համար. Նոքա ձրի աշխատեցան նախ Մարիամեան օրիորդաց դպրոցում, եւ յետոյ բացին Գայիանեան օրի. ուսումնարանը, որ մինչև ցայժմ էլ շարունակվում է, գրաւելով հասարակութեան համակրութիւնը. 160-ից աւելի աշակերտուհիք ունի և այնպիսի բարեկարգ ընթացք ունի, որպիսին խեղճ Ներսիսեան դպրոցը իւր 25 հազար ռուբլի արդիւնքով չէ կարողանում երազել անգամ շնորհիւ ձեզ նման ինքնահաւան եւ կոպիտ հոգաբարձուների:

Դուք պ. Իզմիրեանց, նախ Դանիէլ Իզմիրեանցի կտակի քանդելով զրկված Հայ որբ օրիորդների և մեծ կալուածքից զրկուած և հացի կարօտ Սբրի Արշակունու դառն արտասուքները սրբեցէք և ապա համարձակվեցէք անշահասիրութեան վերայ խօսել:

Դուք պ. Իզմիրեանց, յիշում էք մի ընդհանուր կանոնադրութիւն, որոյ համար իբրև անհրաժեշտ էր ձեր գնալ Էջմիածին։ Բայց այդ կանոնադրութեան մէջ էլ ձեր մասնակցութիւնըն այնքան էր, որքան դպրոցի կանոնադրութեան կազմութեան մէջ. որովհետև այստեղ էլ մի չորք չունէինք գրած։ Այլ այն ճշմարիտ է, որ պ. Վ...ին առաջարկեցիք, որ դուք շատ յարմար կանոնադրութիւն ունինք շինած, որ նա յայտնէ, ուր հարկն է. զուցէ ձեր այդ սխրագործութիւնը հանդէս բերելու համար յիշել էիք վերոյիշեալ կանոնադրութիւնը։

Չը գիտենք սրանից և համքարների մասին գրուածներից յետ ով է դաւաճանը։ Դուք ձեր կեանքում շատ բան որոնեցիք և վերջապէս գտաք այն, որ ամենքը ճանաչեցին ձեր ով լինելը։

Տիկին Էֆէնդեանցի նամակի մասին խօսելիս էլ մեզ ձեր չափով էք չափում, մենք սովոր չենք եղել մի գործ պաշտպանել և մեր շահի համար, նոյն գործի դէմ թղթեր գրել. իսկ եթէ կը կամենաք ձեր ստութիւնը տեսնել, հրամայեցէք խմբագրութիւնս և կարող էք տեսնել Տիկնոջ նամակի սևագրութիւնն էլ, ստորագրութիւնն էլ։ Այս էլ երևի ձեր Մենտորն է ձեզ սովորեցրել։

Ձեր մի մեծ ստութիւնն էլ այն է, որ իբրև մեր առթիւ համալսարանականները դուրս են գնացած դպրոցից։ Մեր ժամանակ եկած և դուրս գնացած են երկուսը, որ միշտ և յայսօր էլ մեր բարեկամներն են և գործունեայ անդամներ մեր խմբագրութեան։ Ինչին է երևում նոցա մեր առթիւ դուրս գնալը. Ինչու այդ ձեր նման հոգաբարձուաց չէք վերաբերում, որ ձեր կոպտութեամբ զզուեցնում էք և չը գիտէք կարգով վարձատրել անձանց ըստ արժանւոյն և աշխատանաց, որ նոքա չըստիպվեն իրանց ապահովութիւնը արտաքոյ դպրոցի որոնել։ Իսկ ինչ կը վերաբերի ձեր ցանկութեան բռնանալու մեր խմբագրական ազատութեան վերայ, որ յայտնել էր երբեմն և մի ազէտ քահանայ հոգաբարձութեան մէջ — այդ երազ է, և ցնորք։ Ոչ թէ դուք, այլ և 24 հոգաբարձուք եթէ ժողովեն՝ կարող չեն ստիպել մեզ զոհելու մեր այդ ազատութիւնը իրանց կրից և բռնութեան։

Թատրոնի համար 600 ռ. առնելու համար, պ. Իզմիրեանց զուր հանգուցեալ Էֆենդեանցի կտակի մէջ որոնել էք նորա տիրոջ անունը, մինչ դուք չը գիտէք, որ պէտք է դառնայիք զորա համար դէպի տիկին Ա...ն. որ առանձին կարգադրութեամբ Հանգուցելոյն ստանալու էր 2000 ռուբլի։

Այս առթիւ ձեր յայտնած անհեթեթ գաղափարը, թէ նա միայն իրաւունք ունի հաշիւ պահանջելու, ով տուել է, գիտեմ, շատ ձեռնտու է ձեզ. վասն զի ապահովացնում է ձեզ, որ ձեր Հանգուցեալ եղբայր Դանիէլ Իզմիրեանցը յարութիւն չի առնիլ ձեզնից հաշիւ պահանջելու համար։

Պ. Իզմիրեանց, ինչ կը վերաբերի մեր կըրթութեան և թափառական շրջելուն — իրաւ է, որ մենք չենք զարգացել և մեծացել այն շըրջանում և հանգամանքներում, որոց մէջ դուք կերպարանք էք առել։ Ձեր բոլոր գրուածքը իւր անմիտ տեղերով, իւր ոճով, անհեթեթ գաղափարներով, տղայական դատողութիւններով, կինտոներին վայել յիշոցաբանութիւններով ցոյց են տալիս, թէ ով է բազարներում կրթուել։ Բայց ձեր յիշած մի քանի անձինք յիրաւի ձեզ լաւ են ճանաչում, բայց դուք ապահով էք, որ նոքա արժան չեն համարել հրապարակաւ ձեր ով լինելը յայտնել, ուստի և յիշում էք նոցա անունները ժողովուրդը խաբելու դիտմամբ. բայց 'ի զուր։

Դուք, պ. Իզմիրեանց, յիշում էք Տիկին Էֆենդեանցի անգրագիտութիւնը. բայց հայ մատաղ գրականութիւնը դեռ ևս չէր տեսած ձեր գրուածքի նման գրագիտութեան դէմ մեղանչող յօդուած։ Փոխանակ ձեր մենտոր տէրտէրին ցոյց տալու, լաւ կ'անէիք գոնէ երկրորդ դասատան մի աշակերտի տայիք սրբագրելու այն, մինչդեռ սա աւելի պակաս կը մեղանչէր հայախօսութեան դէմ։

Դառնանք այժմ, պ. Իզմիրեանց ձեր գրելիք յօդուածին ձեր եղբօր հանգուցեալ Դանիէլ Իզմիրեանցի կտակի մասին։ Դուք ասում էք, որ հաւաքել էք տեղեկութիւնք առնական գործերից։ 'Ի զուր է ձեր այդ աշխատանքը. վասն զի ամենքին յայտնի է, որ Օկրուժնոյ սուդը քանդել է կտակը, և այս վճիռը վերջնական չէ։ Ահա մեր պահանջը ձեզնից այդ մասին.

ա. Դուք բարոյապէս համոզուած էիք, որ ձեր հանգուցեալ եղբայրը իւր կարողութիւնը կամենում էր որբ Հայ օրիորդներին նուիրել։

բ. Դուք չէիք, որ համքարներին հրաւիրեցիք նորա թաղման իբրև նոցա բարերարի թաղման։

գ. Ձեր եղբայր Դանիէլ Իզմիրեանցը իւր կտակով ձեզ որոշել էր 50 ռուբլի ամսական հացի փող, ոչ աւելի և ոչ պակաս. բայց դուք այսօր սեփհականել էք ձեզ նորա գոյքից շատ և շատ աւելի մեծ կտորը. ուղիղ է, պ. Իզմիրեանց, թէ ոչ։

դ. Դուք դեռ հանգուցելոյ կենդանութեան ժամանակ շատերի առաջ պարծենում էիք, թէ ձեր թելադրութեամբ ձեր Հանգուցեալ եղբայրը արել է բարեգործական կտակ և դուք կըտակակատար նշանակուել էք. բայց դուք իբրև կտակակատար կատարեցիք ձեր պարտքը, թէ ոչ։

ե. Երբ Օկրուժնոյ սուդը քանդեց կտակը՝ դուք իբրև կտակակատար պաշտպան ձեր եղբօր կտակի սրբութեան բողոքեցիք այս վճռի դէմ, մանաւանդ աչքի առաջ ունենալով ծերակոյտի (սենատի) վճիռը որ կտակը անջնջելի էր համարել և մերժել Ա. Իզմիրեանցի պահանջը։ Դուք չը կատարեցիք ձեր պարտքը՝ շահախնդրութիւնից դրդած, ուղիղ է, պ. Իզմիրեանց, թէ ոչ։

զ. Հանգուցելոյ պարկեշտաստուն այրին առաջարկեց ձեզ իրան հասանելի տարեկան 6000-ի փոխարէն 2500 բաւականանալ, միայն որ կըտակը կատարուի և հանգուցելոյ յիշատակը անմահ մնայ. բայց դուք իբրև կտակակատար բացէ 'ի բաց մերժեցիք այս ազնիւ առաջարկութիւնը — ուղիղ է, թէ ոչ:

է. Դուք պ. Գր. Իզմիրեանց, մի ձեռքով պաշտպանում էիք ձեր Հանգուցեալ եղբօր կըտակն և միւս ձեռքով սորա դէմ ձեր կենդանի եղբօր համար թղթեր գրում, ուղիղ է, թէ ոչ։ Ինչպէս մեկնենք այս տմարդի երևոյթը՝ նոյն Գր. Իզմիրեանցն և՛ կտակի պաշտպան և՛ կըտակ քանդել ջանացող։ Ուղիղ է թէ ոչ։

Ամենամեծ թշնամին էլ չէր կարող աւելի վնասել Հանգուցելոյ յիշատակին, որքան դուք անպատուեցիք նորա յիշատակը իբրև եղբայր և կտակակատար։

Մենք ձեզնից այս հարցերի պատասխան ենք պահանջում և ոչ ասենական զրպարտութիւնք։ Հասարակական կարծիքը ձեր եղբօր կտակի մասին արդէն յայտնվել է Մեղուի, Մշակի և Тиф. Вѣст. լրագիրների միջոցով և դուք մտածում էք ձեր գայլի չարականներով խաբել այն հասարակութիւնն և զրաւել սորա համակրութիւնը. զրկելով նորա որբերին հարիւր հազար ռուբլու ժառանգութիւնից։ Իզուր ջանք և ապարդիւն վաստակ։

Այս պ. Իզմիրեանց ձեր խիղճն ու լեզուագարութիւնը պէտք է ունենայ մարդ, որ հարիւր հազար հասարակական ժառանգութիւնը սեպհականացնելուց յետ—հանդէս դուրս գայ խօսելու անշահասիրութեան վերայ և Մեղուն կրից ծառայող կոչել հասարակական շահը պաշտպանելու համար, ձեր եղբօր կտակի հարցը զարթեցնելով։ Պ. Ս.

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Վաղուց արդէն պատրաստի ունելով Դիստերվէգի երկրաչափութեան գրքոյկի թարգմանութիւնը, և կարողութիւն չունենալով ի լոյս ընծայել նորան տպագրութեամբ, բայց միևնոյն ժամանակ արժանահաւատ աղբիւրներից տեղեկանալով, որ և Պետերբուրգի ուսանողաց բարեջան խումբը թարգմանել է այդ գրքոյկը, միայն դժուարանում է Պետերբուրգում տըպագրելու թանկ նստելու պատճառաւ, ես պարտք եմ համարում ինձ յայտնել, որ Աղէքսանդրապօլում կայ արդէն բարւոքեալ տպարան, որտեղ և կարելի էր տպել նորան անհամեմատ արժան գնով: Որոյ համար և խոստանում եմ ես ուսանողներին անել նորա միջի 36 երկրաչափական ձևերի փորագրութիւնքն, առանց մի կոպէկ անգամ վարձ պահանջելու նոցանից. միայն թէ բարեհաճէին նոքա 30 ռուբլի ծախս վճարել չէմշառանուամբ փոքրագրութեան փայտ գնելու ու նորա յղկել տալու համար. յայտնելով և միանգամայն, որ գրքոյկի սրբագրութիւնն ևս ես յանձն եմ առնում նոյնպէս ձրիաբար։ Սորանով ես կամենում եմ միայն, որ օր առաջ այդպիսի գրքեր լոյս տեսնեն և գործածվին մեր ուսումնարաններում, որոնց դասագրքերից զուրկ լինելը յայտնի է ամենին։

Վերջացնելով իմ սակերս, հարկաւոր եմ համարում յարակցել, որ ի դէպս համաձայնութեան յարգոյ ուսանողաց կը խնդրեմ օր առաջ իմաց տալ ինձ նամակաւ։

Աղէքսանդրապօլ.

Մակար Տէր—Սարգսեանց.

(3)—2

Մեղուի խմբագրատանը վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը,

ա).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1) "ԱՇՏՕՆԻ ԸՆՏԱՆԻՔ„, թարգմանութիւն Տ. Ն. Ա. գինն է 20 կ.

2) „ ՍԷՐ և ՄԱՀ„ ողբերգութիւն հեղինակ. Գ. Բարխուդարեանի, գինն է 40 կ.

3). «ԲԷՕՄԷԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ», թարգմանութիւն Ա. Նահապետեանի, գինն է 40 կ.

4). «ԵՐԿՈՒ ՔՈՅՐ», վէպ Գիւղական կեանքից. հեղինակ. Գ. Աղայեանի, գինն է 50 կ.

5). "ՄՇԱԿ„ (պատկեր) գործ Ա. Քիշմիշեանի. գինն է 5 կ.

6). ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵԱՑՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ, գործ. Հ. Ղուկասեանի. գինն է 10 կոպէկ։

7). ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ (ծնողաց և ուսուցչաց համար) Գ. Աղայեանցի. գինն է 20 կ.

բ).

ՅՕԳՈՒՏ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ.

8). ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵԶՈՒՎԵԱՆ ՀՐԱԲՈՒԽ ՍԱՐԻ ՎՐԱՅ, հեղինակ. Վ. Խօջայեանի, գինն է 1 ռուբ.

9). ՎԻԼԼԷԻ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ, թարգմանեց Օր. Գ. Յովհաննիսեան, գինն է 30 կ. (ուսումնարանների համար 20 կոպ.)

գ).

ՏՊ. 'Ի ԹԷՈԴՈՍԻԱ։

10). ՁԷՆԻԱԹ— ՂԷՆԻԱԹ, (գրաբար չորս արարուածով) և ՄԵՌՆԻՄ ԻՐԵՆ ԽՈՍՏՑԵՐ ԵՄ, (Վօդէվիլ մէկ արարուածով գործ" Ց. Գեղամեանի) գինն է 50 կ.

դ).

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

11) ՎԻԼՀԷԼՄ ՏԷԼԼ—Շիլլէրի, թարգմ. պ. Բարխուդարեանի: Գինն է՝ ընտիր թղթի վերայ—1 ռ. 20 կ. և հասարակ թղթի վերայ 1 ռ.

Սուրբ Էջմիածնայ ճեմարանի Տեսչութիւնը կծանուցանէ ի գիտութիւն հասարակաց, որ ճեմարանի աշակերտաց թիւը լցուած լինելով, նոր աշակերտ չընդունուիր մինչև առաջիկայ 1876 տարւոյն օգոստոս ամիսը, յորում առանձին շրջաբերական հրամանագրով Սինօդին՝ կհրատարակուի թէ որքան նոր աշակերտք պիտի ընդունուի, որ վիճակներէն, և ինչ պայմաններով:

Օգնական Տեսչի ճեմարանիս Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանց.

(3)—3

Արդէն պատրաստ է և ծախվում է Տփխիսում պ. Աւետիք Էնֆիաճեանցի գրատանը Օրացոյց առաջիկայ 1876 Նահանջ թուականին, որ պարունակում է Հայոց եկեղեցական տօները և իւրաքանչիւր օրուան հարցերը ու ձայները ընդարձակօրէն։ Օդոյ գուշակութիւնք, լուսնի և արևու խաւարումնք, Ռուսաց, Լատինացւոց, Տաճկաց և Հրէից երևելի տօները։ Վերջումն ունի յաւելուածք — Հայոց երևելի տօներու բացատրութիւնք։ Գինն հատով 20 կոպէկ է իսկ 20 հատից աւելի առնողին զիջումն կը լինի։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել ուղղակի վերոյիշեալ գրատունը։ (3)—3

ОБЪЯВЛЕНІЕ

ОБЪ ИЗДАНІИ ВЪ РОСТОВѢ НА ДОНУ

НОВОЙ ГАЗЕТЫ

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

Съ 1-го Января 1876 года будетъ выходить политическая и литературная газета подъ названіемъ „ДОНСКАЯ ПЧЕЛА“, программа которой слѣдующая:

1 Передовыя статьи по вопросамъ, касающимся преимущественно до нуждъ и интересовъ жителей городовъ Ростова и Нахичевани.

2) Правительственныя распоряженія и узаконенія, а также распоряженія земскихъ учрежденій и мѣстныхъ административныхъ властей.

3) Телеграммы Русскаго Телеграфнаго Агентства.

4) Внутреннія извѣстія въ фактическомъ изложеніи.

5) Заграничныя извѣстія, заимствованныя изъ „Правительственнаго Вѣстника“, „Русскаво Инвалида“ и „Journal de St. Petersbourg“.

6) Биржевой отдѣлъ, заключающій въ себѣ свѣдѣнія о внѣшней и внутренней торговлѣ вообще, обзоръ существующихъ на мѣстномъ рынкѣ цѣнъ на разные продукты, а также бюллетень биржевыхъ курсовъ.

7) Судебная хроника—изложеніе болѣе замѣчательныхъ процессовъ въ общихъ судебныхъ и мировыхъ учрежденіяхъ, безъ обсужденія судебныхъ рѣшеній.

8) Смѣсь разныхъ извѣстій.

9) Фельетонъ, въ которомъ будутъ помѣщаться преимущественно театральныя рецензіи, романы, нравственныя расказы и критическія статьи.

10) Объявленія казенныя и частныя, относящіяся до предметовъ общежитейской потребности.

„ДОНСКАЯ ПЧЕЛА“ будетъ выходить два раза въ недѣлю: по **ЧЕТВЕРГАМЪ** и **ВОСКРЕСЕНЬЯМЪ**, по одному листу большаго формата, въ 4-хъ столбцахъ. Всѣхъ нумеровъ въ годъ выйдетъ 96.

Лицъ, желающихъ по мѣрѣ возможности своей содѣйствать трудами своими въ издаваемой мною газетѣ, покорнѣйше прошу присылать какъ свои оригинальныя статьи, такъ равно корреспонденціи и другія литературныя новости для помѣщенія въ газетѣ, при чемъ редакціей будутъ приняты всевозможныя мѣры къ приличному вознагражденію своихъ сотрудниковъ, принимая во вниманіе какъ важность статьи для газеты, такъ равно и трудъ самаго автора.

Всѣ статьи, доставленныя въ редакцію должны быть непремѣнно *за подписью и адресомъ автора*, безъ чего онѣ печатаны не будутъ.

Статьи, признанныя редакціей неудобными къ печатанію, сохраняются въ теченіи 2-хъ мѣсяцевъ въ редакціи, для возвращенія, по личному востребованію.

Статьи безъ обозначенія условій, какъ безплатныя, поступаютъ въ полное распоряженіе редакціи. Статьи, принятыя къ печатанію, въ случаѣ необходимости, подлежатъ сокращенію.

ПОДПИСНАЯ ЦѢНА

съ доставкою въ Ростовѣ на Дону и пересылкою во всѣ города Россійкой Имеріи.

на годъ . . . . 6 руб.
„ шесть мѣсяцевъ . . . 3 „ 50 коп.
„ три мѣсяца . . . . . 2 „ —
„ одинъ мѣсяцъ . . . . 1 „ —

Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію газеты „Донская Пчела“ въ Ростовѣ на Дону.

Редакторъ-Издатель *И. Теръ-Абраміанъ.*

(5)—2

Առաջիկայ 1876 թուին „Արարատ" ամսագրոյ բաժանորդ գրուիլ ցանկացողք թող բարեհաճին դիմելու Տփխիսում 1. Տափիթաղի Ս. Գէորգ եկեղեցւոյ տէր Ղազար ա. քահանայ Պալի—Գալֆայեանց. 2. Աւետեաց (Ջգրաշէն) եկեղեցւոյ տէր Սարգիս քահանայ Աղաջանեանց և 3. Պ. Աւետիք Էնֆիաճեանցի գրադարանում, որ գտնվում է մեծ պօլիցիայի ստորին յարկում քաղաքային շինութեան մէջ։

(3)—3

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 12-го ДЕКАБРЯ 1875 г.   Типографія А. Энфіаджіанцъ и К-°   Տեր Խմբագիր Մ. [illegible]